ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2017թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/2

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել պետական գույքի կառավարման և մասնավորեցման գործընթացի իրականացման արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Ի. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված՝

Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի

2011թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/2 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թվականի հունվարի 11-ի թիվ 1/3 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ Իրականացնել վերահսկողություն պետական գույքի կառավարման և մասնավորեցման գործընթացի իրականացման արդյունավետության նկատմամբ:

Վերահսկողության առարկան՝ Պետական գույքի կառավարման և մասնավորեցման գործընթացի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողության ծավալը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետական գույքի (այդ թվում՝ բաժնեմասերի) կառավարման լիազորությամբ օժտված պետական մարմիններ, ներառյալ՝ պետական մասնակցությամբ կազմակերպություններ (ընտրանքային):

Վերահսկողության օբյեկտները՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, պետական գույքի (այդ թվում՝ բաժնեմասերի) կառավարման լիազորությամբ օժտված պետական մարմիններ, ներառյալ՝ պետական մասնակցությամբ կազմակերպություններ (ընտրանքային):

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2011 թվականի հունվարի 17-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2009 թվականի հունվարի 1 -ից մինչև ստուգման կատարման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Առաջադրված նպատակներին հասնելու համար ընտրվել են վերահսկողության՝ ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական) տեսակները:

Ստուգման փուլում վերահսկողությունն իրականացվել է փաստաթղթերի, տվյալների և փաստերի ուսումնասիրության և համադրման միջոցով:

Վերլուծության փուլում ամփոփվել են դիտարկման և ստուգման ընթացքում ուսումնասիրված տվյալները և կազմվել է վերահսկողության ամբողջական ընթացիկ հաշվետվություն:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Պետական գույքի վարձակալության վերաբերյալ

Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալության տրամադրման կարգը սահմանվել է ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (տարածքի) վարձակալության կարգը հաստատելու մասին» 22.02.01թ. թիվ 125 որոշմամբ (փոփոխվել է 09.04.09թ. թիվ 349-Ն և 20.08.09.թ. թիվ 949-Ն որոշումներով): Ստուգման պահին փաստացի գործող վարձակալության պայմանագրերի թիվը կազմում էր 162: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից 2009-2010թթ. ընթացքում անշարժ գույքի վարձակալության պայմանագրերը կնքվել են «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (տարածքի) վարձակալության» կարգով սահմանված ամսական վարձավճարի նվազագույն մեծության չափով, որն էականորեն ցածր է շուկայական գներից:

ՀՀ Կառավարության 22.02.01թ. թիվ 125 որոշման մեջ կատարված վերը նշված համապատասխան փոփոխություններով փոփոխվել է վարձավճարի նվազագույն մեծության հաշվարկման եղանակը: Ինչպես ամսական վարձավճարի նվազագույն մեծության հաշվարկման եղանակի փոփոխությունից առաջ, այնպես էլ դրանից հետո, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից կնքված վարձակալական պայմանագրերով սահմանված վարձավճարի չափը համեմատվել է նույն գույքի շուկայական արժեքի հետ, որի համար հիմք են ընդունվել անկախ գնահատող «Կառուցագետ» ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքում անշարժ գույքի վարձակալության շուկայի վերաբերյալ ներկայացված տվյալները: Ընդհանուր առմամբ, թվով յոթանասունինը վարձակալական պայմանագրով սահմանված վարձավճարի չափը շուկայականից ցածր չլինելու դեպքում՝ պետական բյուջե կարող էին մուտքագրվել ավել գումարներ:

Որոշ վարձակալական պայմանագրերի ժամկետը լրանալուց հետո անմիջապես նոր պայմանագիր չի կնքվել, սակայն հարաբերությունները շարունակվել են և կազմակերպությունների կողմից նախկին պայմանագրով (ավելի ցածր, քան նոր կնքված պայմանագրերով) սահմանված վարձավճարներ են փոխանցվել:

ՀՀ կառավարության որոշման փոփոխությունից հետո ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից վարձակալական պայմանագրերում վարձավճարը սահմանվել է նվազագույնի չափով: Դրա արդյունքում կան կազմակերպություններ, որոնց հետ վերակնքված վարձակալական պայմանագրերում վարձավճարներն ավելի ցածր են սահմանվել, քան նախկինում կնքված վարձակալական պայմանագրերինը:

2. Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրերի վերաբերյալ

ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 26- ի N 1955-Ն որոշմամբ հաստատվել է Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրի տիպային ձևը:

2.1 Պայմանագրի 5.4.5. կետի համաձայն, գնորդը պարտավոր է կատարել պայմանագրով նախատեսված ներդրումներ: Սակայն հստակ չեն նշվում պայմանագրով նախատեսված ներդրումներն ըստ տարիների, ծախսման ուղղությունների, ներդրումների ձևի և վերջնական արդյունքի:

Գնորդի կողմից ներդրումային պարտավորությունների կատարման արժանահավատության նկատմամբ լիարժեք վերահսկողություն իրականացնելու նպատակով՝ Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրում անհրաժեշտ է հստակ նշել կոնկրետ ներդրումը:

2.2 Պայմանագրի 5.4.6. կետի համաձայն, գնորդը պարտավոր է ապահովել սոցիալական երաշխիքների իրականացումը՝ այսինքն ստեղծել աշխատատեղեր: Պայմանագրում, աշխատատեղերի ստեղծման առնչությամբ, օգտագործվում է «մարդ/ամիս» տերմինը, ինչից հստակ չի երևում, թե կոնկրետ ամսվա կամ տարվա կտրվածքով որքան աշխատատեղ պետք է լինի:

Հետևաբար պայմանագրում անհրաժեշտ է հստակ ամրագրել, թե տարվա յուրաքանչյուր ամսվա կտրվածքով որքան աշխատատեղ պետք է գնորդն ապահովի:

3. Պետական մասնակցությամբ կազմակերպությունների վերաբերյալ (ընտրանքային)

3.1 2009 թվականին Հայաստանի Հանրապետությունում գրանցված են եղել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող թվով 1023 ընկերություններ, որից՝ 849-ը 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերություններ են, իսկ 174-ը՝

մինչև 50 տոկոս: Համաձայն ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման, պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահութաբաժիններ վճարելու գործընթացի վերահսկողությունը դրված է ՀՀ ֆինանսների նախարարության վրա: Պետք է նշել, որ 849-ից վերահսկողության դաշտում է գտնվում պետության սեփականություն հանդիսացող 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող 447 ընկերություններ, իսկ մինչև 50 տոկոս պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունները իրենց ֆինանսական գործունեության արդյունքում ստացած զուտ շահույթից շահութաբաժիններ ընդհանրապես չեն վճարում: Այսինքն՝ թվով 576 ընկերություններ (174-ը մինչև 50 տոկոս պետական բաժնեմաս ունեցող և 402-ը՝ 50 և ավելի տոկոս) շահույթ ստանալու դեպքում պետք է զուտ շահույթից շահութաբաժիններ վճարեին:

3.2 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունում գրանցված են եղել պետության՝ սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող թվով 772 ընկերություն, որից՝ 715-ը 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերություններ են, իսկ 57-ը՝ մինչև 50 տոկոս: Պետք է նշել, որ 772-ից վերահսկողության դաշտում է գտնվում 387 ընկերություն, որից՝ 382 ընկերությունները պետության սեփականություն հանդիսացող 50 և ավելի տոկոս պետական բաժնեմաս ունեցողներն են, իսկ 5-ը՝ մինչև 50 տոկոս պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններ: Այսինքն՝ թվով 385 ընկերություններ (52-ը մինչև 50 տոկոս պետական բաժնեմաս ունեցող և 333-ը՝ 50 և ավելի տոկոս) շահույթ ստանալու դեպքում պետք է զուտ շահույթից շահաբաժին վճարեին:

3.3 2011 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայությամբ առկա է թվով 41 ընկերություն, որոնցից 5-ում պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մինչև 50 % են կազմում:

Ընկերությունները հիմնականում տարիներ շարունակ գործունեություն չեն ծավալում, հետևաբար ընկերություններին պատկանող գույքը արդյունավետ չի օգտագործվում: 2011թ հունվարի 1-ի դրությամբ 10 ընկերություն աշխատել է վնասով: 2010թ. տարեկան շահույթով աշխատել է ընդամենը 8 ընկերություն:

ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 3-ի «Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնելու գործընթացը կանոնակարգելու մասին» թիվ 1013-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի թիվ 474-Ն որոշման համաձայն, արդեն իրականացվել են թվով 16 ընկերության բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքներ:

Հատկանշական է, որ պետական մասնակցությամբ ընկերությունների կողմից 2009 թվականի պետական բյուջե վճարվել է 520,069,900 ՀՀ դրամ շահաբաժին, իսկ 2011 թվականին՝ 684,228,00 ՀՀ դրամ: Այսինքն, նշված ոլորտում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից պարբերաբար իրականացվող վերահսկողական միջոցառումների ընթացքում արձանագրվել է պետական մասնակցությամբ ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարվող շահաբաժինների շուրջ 31,5 % աճ :

Ստորև ներկայացված են ընտրանքային կարգով ուսումնասիրված պետական մասնակցությամբ կազմակերպություններում առկա թերությունները և խախտումները:

«Երևանի Ջրամատակարարման ուղեմաս» ՓԲԸ

Ընկերությունն ընդգրկված է մասնավորեցման ծրագրի մեջ: Ընկերության միակ գործառույթն է ՀՀ երկաթգծին տեխնիկական և խմելու ջրով մատակարելը: Ընկերությունը, լինելով տվյալ ոլորտում մենաշնորհային, կնքել է պայմանագիր «Հարավ Կովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ՝ առանց հիմնավորելու մատուցվող ծառայությունների գինը և շահույթը: Ընկերությունն աշխատում է վնասով և մինչ այսօր ՀՀ պետական բյուջե շահաբաժիններ չի վճարում:

Առանց հաշվի առնելու ստեղծված իրավիճակը, ընկերությունում ուռճացված են հաստիքները՝ տնօրեն, երկու տեղակալ, չորս հաշվապահ, ուղեմասի պետեր՝ իրենց տեղակալներով, արտադրամասի պետ և այլն: Ընկերության կառավարումը ոչ իրավաչափ է և անարդյունավետ:

«Երառսպասարկում» ՓԲԸ

«Երառսպասարկում» ՓԲԸ և «Գիլի» ՍՊԸ միջև 2008թ. հոկտեմբերի 13-ին կնքվել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որով 10 տարի ժամկետով Ընկերությանը տրամադրվել է ք. Երևան, Խորենացի 26ա հասցեում գտնվող շենքից 784քմ տարածք: Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքները հանձնվել են վարձակալության:

Ստուգմամբ պարզվեց, որ Ընկերությունը ք. Երևան, Արշակունյաց պողոտայի 28/5 հասցեում գտնվող 85քմ հասարակական տարածքը վարձակալությամբ հանձնել է «Ռիմ-Գարուն» ՍՊԸ-ին 2009թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2025թ. հոկտեմբերի 10-ը՝ ամսական ընդամենը 40.0 հազար դրամով: Այսինքն յուրաքանչյուր քմ. ընդհամենը 470 ՀՀ դրամ: Ինչպես նաև, ք.Երևան, Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող 353.2քմ խանութի տարածքը վարձակալությամբ հանձնվել է «Սահակյան Գորգեր» ՍՊԸ-ին 2001թ. հուլիսի

4-ից մինչև 2024թ. հուլիսի 4-ը՝ ամսական 72.1 հազար դրամով: Այսինքն յուրաքանչյուր քմ. ընդհամենը 204 ՀՀ դրամ:

«Երառսպասարկում» ՓԲԸ –ի կողմից վարձակալության հանձնված տարածքների վարձավճարները զգալիորեն ցածր են շուկայական գներից:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվել է սխալներով (օրինակ՝ ձեռք են բերվել հիմնական միջոցներ, բայց մուտքագրվել են որպես փոքրարժեք գույք), հաշվարկված եկամուտները արժանահավատ չեն (ներմուծված ապրանքները 2009 թվականին իրացվել են մասամբ ինքնարժեքից ցածր գնով, մասամբ էլ՝ չնչին շահույթով), ծախսերն էլ ուռճացված են:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ » ԲԲԸ

ՀՀ կառավարության 30.04.2009թ.N-494-Ն որոշմամբ ստեղծվել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (այսուհետ «ԷԿԵՆԳ» ԲԲԸ): «ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

«ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ն մատուցում է չորս տեսակի ծառայություն,

- էլ. ստորագրության տրամադրում 15000 դրամ
- էլ. ստորագրության ժամկետի երկարաձգում 5000 դրամ
- էլ. ստորագրության փաթեթի առաքում և նույնականացում 7500 դրամ
- էլ. ստորագրության տեղադրում և ուսուցում 7500 դրամ

«ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ի կողմից տրամադրվող էլեկտրոնային ստորագրությունների ինքնարժեքի մոտավոր հաշվարկը, ներկայացվել է 2009թ. դեկտեմբերի 29-ին կառավարման խորհրդի նիստին և արձանագրության 8-րդ կետի համաձայն քննարկվել է՝ ընդունվելով ի գիտություն:

Հարկ է նշել, որ ինքնարժեքի հաշվարկի մեջ ներառված են հավաստագրի արժեքը՝ դիսկ, պիտակ, ծրար և այլն, որոնց ընդհանուր մեկ միավորի ինքնարժեքի գումարը կազմում է 12,635.64 դրամ, հարկեր տուրքերով՝ մոտ 15000 դրամ: Մինչդեռ «ԷԿԵՆԳ» ընկերությունը, առանց հաշվի առնելու վերը նշվածը, այն վաճառում է ընդամենը նույն 15000 դրամով:

Համակարգչային ծրագրերի հետ կապված ծառայությունների մատուցման վայրը որոշվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան: Նշված դեպքում ծառայության մատուցման վայրը Հայաստանի Հանրապետությունն է, ուստի կազմակերպությունը կրում է ԱԱՀ հաշվարկելու և վճարելու պարտավորություն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան: «ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ն թե եկամուտի 10%, թե ԱԱՀ-ի 20% հաշվարկել և վճարել է, սակայն չի ներառել ինքնարժեքի ծախսերի մեջ: «ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ն, լինելով տվյալ

ծառայության մասով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հավաստագրված միակ կազմակերպությունը, չի ապահովել համապատասխան շահույթ և չի վճարել շահաբաժին:

Իսկ մյուս ծառայությունների մասով լիազոր մարմնին կամ խորհրդին ինքնարժեքի հաշվարկ չի ներկայացվել: Չկան նաև հաստատված սակագներ, այսինքն սակագները կարգավորված չեն համապատասխան ակտով:

«ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ն 2011թ. համար չունի խորհրդի կամ լիազոր մարմնի կողմից հաստատված հաստիքացուցակ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ընկերությունը ստեղծման օրից առ այսօր չունի խորհրդի կամ լիազոր մարմնի կողմից հաստատված տարեկան ծախսերի նախահաշիվ, իսկ 2010թ. պետական բյուջեից «ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ին հատկացվել է 36 մլն դրամ, որից, առանց պայմանագրի նախահաշվում համապատասխան փոփոխության և լիազոր մարմնի համաձայնության, «ԷԿԵՆԳ» ԲԲԸ-ն 11,900.000 դրամն ուղղել է այլ նպատակի՝ հավաստագրերի ձեռքբերման համար: ՀՀ կառավարության 21 ապրիլի 2011թ. 442-Ն որոշմամբ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ բաց բաժնետիրական ընկերությունը վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության և ընդգրկվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կազմում:

«Ա.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ

«Ա.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը անվանափոխվել է 2010թ. հոկտեմբերի 29-ին՝ վերանվանվելով «Ա.Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիա» ՊՈԱԿ-ի (հրաման՝ 2010թ. նոյեմբերի 1-ի):

«Ա.Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիա» ՊՈԱԿ-ի տարեկան ծախսերի նախահաշիվները հաստատված չեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

«Ա.Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիա» ՊՈԱԿ-ի ընդհանուր տարածքը կազմում է 84,08 հա. այդ թվում՝

1. «Ա.Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիա» ՊՈԱԿ-ի գլխամաս 33,631 հա
2. քոթեջներ 0,75 հա.
3. թենիսի կորտեր 0,68 հա.
4. Եղվարդ 2,53 հա.
5. «Արագած» բարձր լեռնային գիտական կայան 15 հա.

6. «Նոր-ամբերդ» բարձր լեռնային գիտական կայան 12,97 հա.

7. «Նոր-ամբերդ» հանգստյան տուն 9,02 հա.

8. Սևան հանգստյան տուն 9,5 հա.

«Ա.Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիա» ՊՈԱԿ-ում առկա են թվով 80 հատ ավտոմեքենա որից 51 հատը գտնվում է անսարք վիճակում 29՝ սարքին:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն» ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը կազմում է 32.5 հազ դրամ Առ 16.05.2011թ, դրությամբ «Ա.Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիա» ՊՈԱԿ-ում աշխատում է թվով 459 մարդ, այդ թվում 126 մարդ 0,5 հաստիքով, որոնց աշխատավարձը նվազագույնից ցածր է:

«Ռադիոֆիզիկայի Գիտահետազոտական Ինստիտուտ» ՓԲԸ

Ռադիոֆիզիկայի Գիտահետազոտական Ինստիտուտը, նախկինում Ռադիո-չափումների Համամիութենական Գիտահետազոտական Ինստիտուտ, հիմնադրվել է 1971թ. նախկին ԽՍՀՄ կառավարության որոշմամբ:

Ինստիտուտում իրականացվող «Արև-100» ծրագրի հեղինակ ակադեմիկոս Պ. Հերունին «Լայոն գիտական կրեդիտ» (Lion Seiences Trust) կոնցերնից 1994թ. ստացել է 100.000 հազ դրամ դրամաշնորհ, նույն թվականին անգլիական «Սոլարջեն» ֆիրմայի հետ կնքել է պայմանագիր «Արև-100» ծրագրի ֆինանսավորման և իրականացման համար: Աշխատանքները սկսվել են 1994թ. ապրիլ ամսից՝ մեկ տարի ժամկետով, սակայն շարունակվել են մինչև 1996թ. մայիսը և չեն ավարտվել:

1996թ. մինչև 2004թ. աշխատանքներ չեն կատարվել: 2004թ. ՀՀ կառավարության կողմից անվանական հատկացվել է 50.0 մլն դրամ և այդ տարվանից էլ վերսկսվել են աշխատանքները: 2005թ. հատկացվել է 24.0 մլն դրամ: 2006թ. հատկացվել է 28.7 մլն դրամ:

2007-2011թթ. հատուկ ֆինանսավորում չի եղել և կատարվել են միայն պահպանման աշխատանքներ:

Ռադիոֆիզիկայի Գիտահետազոտական Ինստիտուտում աշխատում են թվով 96 մարդ:

Ինստիտուտուտին սեփականության իրավունքով պատկանում էհետևյալ անշարժ գույքը:

1. «ՌԳՀԻ» ՓԲԸ-ի կենտրոնական մասնաշենք ք. Երևան, Կոմիտասի պողատա 49/4, արտադրական մակերեսը 7675քմ, չի օգտագործվում ընդամենը 3500 քմ:

2. «ՌԳՀԻ» ՓԲԸ-ի Ալիք փորձարարական գործարան՝ ք. Երևան, Լեփսիուսի 25ա (Յաղուբյան 25ա), արտադրական մակերեսը 1284,7 քմ, չի շահագործվում 1994 թվականից:

3. «ՌԳՀԻ» ՓԲԸ-ի Արագածի գիտական կենտրոն Արագածի մարզ, գ.Օրգով 97հա չի շահագործվում:

Այսինքն, պետական գույքի կառավարումն իրականացվում է անարդյունավետ, քանի որ օգտագործվում է գույքի չնչին մասը: Հետևաբար, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ փաստացի չօգտագործվող շենք-շինությունները և տարածքները պետության կարիքների համար արդյունավետ օգտագործելու նպատակով, թեկուզև այդ տարածքները տրամադրելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգի պետական մասնակցությամբ այլ ընկերությունների:

«Երևանի» «Պլաստպոլիմեր» ԳՀԻ ՓԲԸ

«Երևանի» «Պլաստպոլիմեր» ԳՀԻ ՓԲԸ-ն հիմնադրվել է 1958թ.: 1967թ. մինչև 1991թ. ինստիտուտը Օխտայի «Պլաստպոլիմեր» Գիտա-արտադրական Միավորման կազմում էր (ք.Սանկտ Պետերբուրգ):

Ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում է, որն էլ հանդիսանում է ինստիտուտի 100% սեփականատեր: Ինստիտուտը գտնվում է Երևանի արդյունաբերական գոտում, «Նաիրիտ» գործարանի հարևանությամբ, զբաղացնում է 13100քմ տարածք և ունի 9500քմ արդյունաբերական մակերես:

Ներկայումս «Երևանի» «Պլաստպոլիմեր» ԳՀԻ ՓԲԸ-ն գոյատևում է միայն միջազգային կազմակերպությունների կողմից ստացված դրամաշնորհների հաշվին:

4. 2009 և 2010 թվականների ընթացքում օտարված և մասնավորեցված պետական գույքի վերաբերյալ

4.1 2009 թվականի ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության համապատասխան որոշումների համաձայն իրականացվել է պետական անշարժ գույքի օտարման 10 գործարք:

Դրանցից 9-ի օտարումը իրականացվել է հրապարակային սակարկությունների միջոցով, որից 2-ը մրցույթով՝ ներդրումային պայմաններով, իսկ 7-ը աճուրդային եղանակով՝ առանց նախապայմանների:

Մեկ գործարք իրականացվել է ուղղակի վաճառքի ձևով նախօրոք հայտնի գնորդին:

Վերոնշյալ 10 գործարքների արդյունքում 2009 թվականին ՀՀ պետական և համայնքային բյուջե է մուտքագրվել 116 միլիոն 330 հազար դրամ:

2010 թվականի ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության համապատասխան որոշումների համաձայն իրականացվել է պետական անշարժ գույքի 2 օտարման գործարք:

Երկու դեպքում էլ օտարումն իրականացվել է ուղղակի վաճառքի ձևով՝ նախօրոք հայտնի գնորդներին:

Նշված 2 գործարքների արդյունքում 2010 թվականին ՀՀ պետական և համայնքային բյուջե է մուտքագրվել 101 միլիոն 918 հազար դրամ:

Ընդամենը 2009 և 2010 թվականների ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության համապատասխան որոշումների համաձայն իրականացված պետական անշարժ գույքի օտարման գործարքների արդյունքում ՀՀ պետական և համայնքային բյուջե է մուտքագրվել 218 միլիոն 248 հազար դրամ:

4.2 Ստուգման ժամանակահատվածում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը: 2009 և 2010 թթ. ընթացքում մասնավորեցվել են «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի ցանկում ընդգրկված 11 ընկերության բաժնետոմսեր և գույքային միավորներ, որից 4-ը վաճառվել է ուղղակի վաճառքով, 4-ը՝ աճուրդով, իսկ 3-ը՝ մրցույթով:

4.3 Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի 4- րդ հոդվածի՝ մասնավորեցման ենթակա օբյեկտների զբաղեցրած տարածքները չեն մասնավորեցվում, և դրանք առանձնացվում են մասնավորեցվող գույքի կազմից, եթե տվյալ օբյեկտները տեղաբաշխված են երկաթուղային կայարաններում: Նշենք, որ նույն հոդվածի համաձայն՝ մասնավորեցման ենթակա չեն նաև երկաթուղիները: ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 26-ի N205-Ն որոշմամբ «Մետէքսիմ» ՍՊԸ-ն դասական աճուրդով գնել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն ամրացված՝ Երևան քաղաքի Այվազովսկու 4/2 հասցեում գտնվող՝ 3600քմ մակերեսով մետաղյա իրերի պահեստը, 74.7 քմ մակերեսով կշեռքը: Ստուգմամբ պարզվել է, որ «Մետէքսիմ» ՍՊԸ-ի սեփական տարածքում առկա է երկաթուղի:

5. Պետական գույքի գնորդների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ

Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրի 7.2. կետի համաձայն, նախատեսված ներդրումը չկատարելու կամ մինչև 50% կատարելու դեպքում գնորդը պարտավոր է ՀՀ պետական բյուջե վճարել տուգանք չկատարված ներդրումների գումարի պայմանագրով նախատեսված տոկոսի չափով: Պետական գույքի գնորդների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման գործընթացի ուսումնասիրությամբ պարզվեց, որ առկա են ընկերություններ, որոնք չեն կատարել պայմանագրով ստանձնած ներդրումային պարտավորությունները:

Մասնավորապես.

5.1 «Կովկասյան կոմունիկացիոն խումբ» ՓԲԸ

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության և <<Կովկասյան կոմունիկացիոն խումբ>> ՓԲԸ-ի միջև 14.05.2004թ. կնքվել է <<Դվին հյուրանոցային համալիր>> ՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման թիվ 686-Ու պայմանագիրը: Պայմանագիրը կնքվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. մարտի 11-ի թիվ 319-Ա որոշումը: Բաժնետոմսերի վաճառքի գինը կազմել է 100,000.0 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Ընկերությունը պարտավոր էր պայամանագիրը կնքելու օրվանից 5 տարվա ընթացքում <<Դվին>> հյուրանոցային համալիրի վերակառուցման, արդիականացման և ժամանակակից չափանիշներին համապատասխանեցման նպատակով իրականացնել մինչև 30.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, սակայն ոչ պակաս 10.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրում:

Սինչդեռ, սուտգմամբ պարզվեց, որ Ընկերությունը մինչ օրս չի կատարել պայմանագրով նախատեսված որևէ ներդրում՝ խախտելով պայմանագրի 8.1 կետը: Պայմանագրով ամրագրված, սակայն չկատարված ներդրումները, պետությանը պատճառել են զգալի վնասներ՝ հարկերի, սոցիալական վճարների, տուրքերի և այլ եկամուտների մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վնասներ են՝ իրավունքը խախտված անձի չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ): Այսինքն՝ «Կովկասյան կոմունիկացիոն խումբ» ՓԲԸ գործողություններով Հայաստանի Հանրապետությանը հասցվել է վնաս, ինչի նկատմամբ կիրառելի են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված

տոկոսները: Նշենք նաև, որ մասնավորեցման նշված թիվ 686-Ու պայմանագիրը չի կազմված հաստատված տիպային ձևով, որով նախատեսվում է ներդրումային պարտավորությունները չկատարելու դեպքում՝ մինչև 15-20% չափով տուգանք:

17.02.2011թ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է թիվ 233-Ա որոշումը, որով ՀՀ ԿԱ պետգույքի կառավարման վարչությանը հանձնարարվել է մեկամսյա ժամկետում նշված պայմանագրում կատարել փոփոխություն՝ ներդրումների ժամկետը երկարացնելու և ներդրումներ չկատարելու դեպքում տուգանք կիրառելու մասով: Սակայն մինչ այսօր պայմանագրում նշված փոփոխությունները կատարված չեն:

5.2 «Ատոմսեյսմանախագիծ» ՓԲԸ ինժեներալաբորատոր մասնաշենքի համար նախատեսված ԱԾՕ

ՀՀ կառավարության 26.12.2002թ. թիվ 2152-Ն որոշման համաձայն «Ատոմսեյսմանախագիծ» ՓԲԸ-ի կազմից առանձնացված ինժեներալաբորատոր մասնաշենքի համար նախատեսված անավարտ շինարարության օբյեկտը մրցույթով մասնավորեցվել է «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ին և 07.04.2003թ- ին կնքվել է թիվ 173-Մ պետական գույքի մասնավորեցման պայմանագիրը, որով գնորդը պարտավորվել է պայմանագրի կնքման պահից 24 ամսվա ընթացքում ավարտել շինարարական աշխատանքները, օբյեկտի շինարարության ընթացքում ստեղծել 50 աշխատատեղ, կատարել 1,200.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում, ընդ որում, ներդրվող գումարից 200.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումարը ծախսել ապամոնտաժման աշխատանքների, մնացած 1,000.0 հազ. դոլարին համարժեք դրամը՝ շինարարական աշխատանքների, արտաքին և ներքին ձևավորման վրա: Համաձայն պայմանագրի 5.3.5 կետի ներդրումը չկատարելու, կամ մինչև 50% կատարելու դեպքում գնորդը մեկ ամսվա ընթացքում պարտավոր է կատարել ներդրումը ամբողջությամբ, միաժամանակ պետական բյուջե վճարելով տուգանք՝ ներդրում չկատարած գումարի 15%-ի չափով:

Ստուգմամբ պարզվել է, որ կազմակերպությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և 05.04.2005թ. դիմել է Վարչության պետին՝ խնդրելով երկարաձգել պարտավորության կատարման և շինարարության ավարտման ժամկետը՝ մինչև 01.07.2006թ., ավելացնելով ներդրումների կատարման չափը մինչև 1.8 մլն ԱՄՆ դոլար և աշխատատեղերը հասցնելով 70-ի:

Վարչության և «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի միջև 28.04.2005թ. կնքվել է 173-Մ պայմանագրի փոփոխություն, որտեղ ներառվել են գնորդի վերը նշված առաջարկությունները: Նոր պարտավորությունները ևս չեն կատարվել, իսկ վարչության կողմից չեն կիրառվել պայմանագրով նախատեսված տուգանքներն ու պատժամիջոցները: Այնուհետև, հաշվի առնելով 04.04.2006թ. գնորդի թիվ 42 գրությամբ ներկայացված

խնդրանքը՝ սահմանված ներդրումային պարտավորությունները մինչև 2008թ. վերջը հետաձգելու վերաբերյալ, կրկին թիվ 173-Մ պայմանագրում կատարվել են փոփոխություններ և լրացումներ:

Այսպիսով, արդեն երրորդ անգամ փոփոխված պայմանագրով գնորդը պարտավորվել է շինարարական աշխատանքներն ավարտել մինչև 31.12.2008թ. և իրականացնել ներդրումներն ամբողջ ծավալով՝ 2006թ. ընթացքում 400.0 հազ. դրամ, 2007թ. ընթացքում՝ 1,200.0 հազ. դրամ, 2008թ. ընթացքում՝ 1,200.0 հազ.դրամ:

Սակայն, ըստ նոր ժամանակացույցի, ներդրումային պարտավորությունները նույնպես չեն կատարվել: Վարչության և գնորդի միջև 18.02.2008թ. կնքվել է թվով չորրորդ համաձայնագիրը: Ըստ փոփոխված համաձայնագրի ներդրումային պարտավորությունները երկարաձգվել են մինչև 31.12.2010թ: Նշենք, որ տվյալ ժամանակահատվածում գործող համաձայնագրի 7.3 կետի բ) ենթակետով նախատեսված պատժամիջոցները մինչև նոր համաձայանագրի կնքումը ևս չեն կիրառվել:

Սկսած 2003թ. ապրիլի 7-ից գնորդի կողմից Պարույր Սևակի 9 հասցեում բացի քանդման աշխատանքներից որևէ ներդրում կատարված չէր, սակայն պետք է նշել, որ ստուգման պահին «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից շինարարական աշխատանքները արդեն սկսվել են կատարվել:

5.3 Ներդրումային պարտավորությունները կատարած, սակայն ըստ նպատակային նշանակության չշահագործվող օբյեկտների վերաբերյալ

Որոշ կազմակերպություններ, պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարել են, սակայն չեն ապահովում պայմանագրով նախատեսված նպատակային նշանակությանը համապատասխան օբյեկտների շահագործումը: Օրինակ՝ Վանաձորի կինոցանցի «Գուգարք» կինոթատրոնը կամ Դիլիջանի «Մանուշակ» կինոթատրոնը չեն շահագործվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Պետական գույքը վարձակալության է տրամադրվում ՀՀ Կառավարության 22. 02.01թ. թիվ 125 որոշմամբ (փոփոխվել է 09.04.09թ. թիվ 349-Ն և 20.08.09թ. թիվ 949-Ն որոշումներով) սահմանված ամսական վարձավճարի նվազագույն չափով, որը զգալիորեն պակաս է նույն գույքի վարձակալության շուկայական գներից:

2. Վարձակալական պայմանագրերի ժամկետը լրանալուց հետո անմիջապես նոր պայմանագիր չի կնքվել և նախկին պայմանագրով ցածր վարձավճարներն են փոխանցվել:

3. ՀՀ կառավարության որոշմամբ վարձավճարը սահմանվել է նվազագույնի չափով, ինչի արդյունքում վերակնքված վարձակալական պայմանագրերում վարձավճարներն ավելի ցածր են, քան նույն գույքի համար նախկինում կնքված վարձակալական պայմանագրերինը:

4. ՀՀ Կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի թիվ 1955-Ն որշմամբ հաստատված Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրի տիպային ձևի 5.4.5 կետով սահմանված գնորդի ներդրումային պարտավորությունները հստակ չեն՝ չեն նշվում կոնկրետ ներդրումները:

5. ՀՀ Կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի թիվ 1955-Ն որշմամբ հաստատված Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրի տիպային ձևի 5.4.6 կետով սահմանված պարտականությունից հստակ չի երևում, թե տարվա յուրաքանչյուր ամսվա կտրվածքով որքան աշխատատեղ գնորդը պետք է ապահովի:

6. Պետական մասնակցությամբ ընկերությունները, որպես կանոն, աշխատում են վնասով՝ ՀՀ պետական բյուջե չվճարելով շահաբաժիններ: Օրինակ՝«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ, «Երառսպասարկում» ՓԲԸ, «Երևանի Ջրամատակարարման ուղեմաս» ՓԲԸ և այլ:

7. Պետական մասնակցությամբ կազմակերպությունների անշարժ գույքը օգտագործվում է անարդյունավետ՝ առկա են մեծ քանակությամբ շենք-շինություններ և տարածքներ, որոնք փաստացի չեն շահագործվում: Օրինակ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համակարգի «Ռադիոֆիզիկայի Գիտահետազոտական Ինստիտուտ» ՓԲԸ, «Երևանի» «Պլաստպոլիմեր» ԳՀԻ ՓԲԸ:

8. Պետական մասնակցությամբ կազմակերպությունների տարեկան ծախսերի նախահաշիվները և աշխատակիցների հաստիքացուցակները մեծամասամբ չեն հաստատվում պետական լիազոր մարմնի կողմից: Օրինակ՝ «Ա.Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ, «Երևանի Ջրամատակարարման ուղեմաս» ՓԲԸ և այլն:

9. Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածի մասով նկատվում է օտարվող և մասնավորեցվող պետական գույքի քանակական նվազում: 2009-10թթ. եղել են օտարման ընդամենը 12 և մասնավորեցման 11 գործարքներ:

10. «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի 4- րդ հոդվածի համաձայն, մասնավորեցման ենթակա չեն երկաթուղիները, սակայն ստուգմամբ պարզվել է, որ կան մասնավորեցված պետական օբյեկտներ, որոնց տարացքում առկա է երկաթգիծ:

11. Առկա են ներդրումային պարտավորությունները կատարած, սակայն ըստ նպատակային նշանակության չշահագործվող օբյեկտներ: Օրինակ՝ Վանաձորի կինոցանցի «Գուգարք» կինոթատրոն, Դիլիջանի«Մանուշակ» կինոթատրոն:

Հարկ է նշել, որ եզրակացության 4 և 5 կետերում նշված հարցերին ՀՀ վերահսկիչ պալատն արդեն իսկ անդրադարձել է նախորդ վերահսկողության ժամանակ, սակայն մինչ այսօր խնդրին լուծում չի տրվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Կառավարությանը

Քննարկել՝

1. ՀՀ կառավարության 22.02.01թ. թիվ 125 որոշման (փոփոխվել է 09.04.09թ. թիվ 349-Ն և 20.08.09թ. թիվ 949-Ն որոշումներով) մեջ փոփոխություն կատարելու հարցը՝ պետական գույքի վարձավճարի չափը շուկայական գներին հնարավորինս մոտեցնելու նպատակով:

2. ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի թիվ 1955-Ն որշմամբ հաստատված պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրի տիպային ձևի 5.4.5 կետով սահմանված գնորդի ներդրումային պարտավորությունների հստակեցման և կոնկրետ ներդրումներ նախատեսելու խնդիրը:

3. ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի թիվ 1955-Ն որոշմամբ հաստատված Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրի տիպային ձևի 5.4.6 կետով սահմանված աշխատատեղեր ստեղծելու պարտականության տարվա յուրաքանչյուր ամսվա կտրվածքով սահմանելու հարցը:

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը՝

1. Գնորդների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում՝ կիրառել համապատասխան պայմանագրով նախատեսված տուգանքներ :

2. Յուրաքանչյուր տարվա կտրվածքով հաստատել պետական մասնակցությամբ կազմակերպությունների տարեկան ծախսերի նախահաշիվները և աշխատակիցների հաստիքացուցակները :

3. Ձեռնարկել միջոցներ «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքում ընդգրկված կազմակերպությունների մասնավորեցման գործընթացն իրականացնելու համար:

4. Կազմակերպել ՀՀ ԿԱ պետական գույքի վարչության ենթակայության թվով 41 ընկերությունների մասնավորեցման (օտարման) գործընթացը:

5. Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մասնակցությամբ ընկերությունների արդյունավետ կառավարման ուղղությամբ՝ ապահովելով վերջիններիս կողմից ՀՀ պետական բյուջե շահաբաժինների վճարումը:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը՝

1. Ձեռնարկել միջոցներ նախարարության համակարգի պետական մասնակցությամբ կազմակերպությունների փաստացի չօգտագործվող շենք-շինությունները և տարածքները՝ պետության կարիքների համար արդյունավետ օգտագործելու նպատակով՝ այդ տարածքները տրամադրելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության պետական մասնակցությամբ այլ ընկերությունների:

2. Քննարկել վնասով աշխատող պետական մասնակցությամբ ընկերությունների լուծարման և/կամ մասնավորեցման (օտարման) հարցը:

3. Յուրաքանչյուր տարվա կտրվածքով հաստատել պետական մասնակցությամբ կազմակերպությունների տարեկան ծախսերի նախահաշիվները և աշխատակիցների հաստիքացուցակները :

4. Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մասնակցությամբ ընկերությունների արդյունավետ կառավարման ուղղությամբ՝ ապահովելով վերջիններիս կողմից ՀՀ պետական բյուջե շահաբաժինների վճարումը:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի համաձայն մեկամսյա ժամկետում վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«____»_____ 20 թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (37410) 521 877, ֆաքս՝ (37410) 529 753

№ _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դ.Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 23-ի N 02/23.16/795-13 հանձնարարականի՝ ՀՀ էլեկտրոնային կառավարման www.e-gov.am կայքում տեղադրված՝ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվություններում ամրագրված՝ հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված միջոցառումների կատարման վերջնական արդյունքների վերաբերյալ հայտնում եմ՝

1. ՀՀ էլեկտրոնային կառավարման կայքում https://www.e-gov.am/control_chamber/ հասցեով, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության գործառույթների մասով, 2013 թվականի հունվարի 31-ի դրությամբ տեղադրված է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 2011 թվականին իրականացված <<Պետական գույքի կառավարման և մասնավորեցման գործընթացի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը>> (որը հաստատվել է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 33/2 որոշմամբ):

2. ՀՀ վերահսկիչ պալատի վերը նշված՝ ընթացիկ հաշվետվությունում (այսուհետ՝ հաշվետվություն) ամրագրված եզրակացությունների և առաջարկությունների մասով ներկայացնում եմ հետևյալ արդյունքները՝

I. ՀՀ կառավարության քննարկմանն առաջարկվող խնդիրների մասով՝

1. Պետական գույքի վարձավճարի չափը շուկայական գներին հնարավորինս մոտեցնելու նպատակով **ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 22-ի <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը,**

տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (տարածքի) վարձակալության կարգը հաստատելու մասին>> N 125 որոշման մեջ փոփոխություններ կատարելու առաջարկության վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 1144-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի թիվ 125 որոշման մեջ, որով լուծումներ են առաջարկվել հետևյալ խնդիրներին՝

- կանոնակարգվել է ՊՈԱԿ-ներին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի վարձակալությամբ տրամադրման գործընթացը,
- ՊՈԱԿ-ներին ամրացված գույքի (բացառությամբ հանրակրթական դպրոցներում սովորողների սննդի կազմակերպման համար տրամադրվող տարածքների, ինչպես նաև ժամավճարով՝ մինչև 15 օր ժամկետով՝ օգտագործման իրավունքի պայմանագրերին համապատասխան տրամադրվող տարածքների) վարձակալությամբ տրամադրման ձևը սահմանվել է աճուրդը,
- սահմանվել է ժամավճարով գույքի օգտագործման տրամադրման ընթացակարգը,
- վերաշարադրվել և առանձին հավելվածով հաստատվել է վարձավճարների նվազագույն մեծությունների հաշվարկման կարգը (առանձին՝ յուրաքանչյուր գույքի միավորի, շենքի կամ շինության համար և ժամավճարով վարձակալելու դեպքում), ինչի արդյունքում բարձրացել է վարձակալությամբ տրվող գույքի վարձավճարների մեծությունը:

2. ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի <<Պետական գույքի մասնավորեցման (առուվաճառքի) պայմանագրերում պարտավորությունների ամրագրման և դրանց կատարման վերահսկման գործընթացը կանոնակարգելու մասին>> N 1955-Ն որոշմամբ հաստատված պայմանագրի տիպային ձևի **5.4.5 կետով** սահմանված գնորդի ներդրումային պարտավորությունների հստակեցման և կոնկրետ ներդրումներ նախատեսելու և **5.4.6 կետով** սահմանված՝ տարվա յուրաքանչյուր ամսվա կտրվածքով աշխատատեղեր ստեղծելու պարտավորություններ սահմանելու վերաբերյալ՝

- հաշվի առնելով, որ պայմանագրի 5.4.5. կետի շարադրանքը բխում է պետական գույքի մասնավորեցման մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշումների բովանդակությունից և այն հանգամանքը, որ պայմանագրով ամրագրվում են պետական գույքի մասնավորեցման կամ օտարման մասին ընդունված ՀՀ կառավարության համապատասխան որոշումների դրույթները, փոփոխություններ են առաջարկվել և կատարվել ՀՀ կառավարության մի շարք որոշումներում,
- ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 1389-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 14-ի N 1491-Ն որոշման մեջ, համաձայն որի Հրազդան կինոցանցի <<Ծաղկաձոր>> կինոթատրոնն

ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել էր <<Կինոթատրոն Մոսկվա>> ՍՊԸ-ին: <<Ծաղկաձոր>> կինոթատրոնի շինարարական աշխատանքների ավարտը սահմանվել է մինչև 2015 թվականը, իսկ շինարարական աշխատանքների ավարտից հետո, կինոթատրոնի գործունեության պրոֆիլի պահպանման պահանջը սահմանվել է առնվազն 20 տարի,

- ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի 1337-Ա որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 995-Ա որոշման մեջ՝ վարչության և Մերուժան Իսոյանի միջև 2003 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված պայմանագրով Երևան քաղաքի Նորաշեն թաղամասի <<Հանրախանութ>> անավարտ շինարարության օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտի ժամկետը սահմանելով մինչև 2015 թվականը և ներդրումները դարձնել 30 մլն ՀՀ դրամին համապատասխան,
- Վարչության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 760-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է <<Պետական կրկես>> ՊՈԱԿ-ին ամրացված գույքն օտարելու մասին որոշման մեջ փոփոխություններ կատարել հստակեցնելով նոր շենքի կառուցման համար ներկայացվող պահանջները (միջազգային ստանդարտներին համապատասխանող կրկեսի շենք ունենալու վերաբերյալ) և պրոֆիլի պահպանման հետ կապված ժամկետները,
- Վարչության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 11-ի N 319-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է վերաշարադրել <<Դվին>> հյուրանոցային համալիրի կողմից իրականացվող ներդրումների իրականացման չափերն ու ժամկետները:

II. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից լուծում պահանջող խնդիրների մասով՝

1. Գնորդների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում համապատասխան պայմանագրով նախատեսված տուգանքների կիրառման վերաբերյալ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից հայտնաբերված՝

- հաշվետվության 5.1 կետում նշված՝ <<Դվին հյուրանոցային համալիր>> ՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման N 686-Ու պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ պահանջը կկատարվի ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 11-ի N 319-

Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումից հետ,

- հաշվետվության 5.2 կետում նշված՝ <<Ատոմսեյսմնախագիծ>> ՓԲԸ ինժեներալաբորատոր մասնաշենքի համար նախատեսված ԱՇՕ-ի մասնավորեցման N 173-Մ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին 24.12.2010թ.-ին կնքվել է նոր համաձայնագիր, համաձայն որի <<Իտարկո Քոնսթրաքշն>> ՓԲԸ պարտավորվել է մինչև 2012 թվականի հունիսի 30-ն ավարտել շինարարական աշխատանքները, օբյեկտի շինարարության ընթացքում կատարել 3,5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ներդրումներ և շինարարության ընթացքում ստեղծելով 100 աշխատատեղ: Գնորդի կողմից ստանձնած 3,5 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն կատարվել է 1,27 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում, իսկ նախատեսված 100 աշխատատեղերը չեն ապահովվել: Մինչև 2012 թվականի հունիսի 30-ը Օբյեկտի շինարարական աշխատանքներն ավարտելու պարտավորությունը նույնպես գնորդի կողմից չի կատարվել,
- հաշվետվության 5.3 կետում նշված Վանաձորի կինոցանցի <<Գուգարք>> կինոթատրոնի գույքի մասնավորեցման պայմանագրով նախատեսված պարտավորությունները ավարտվել են 2008 թվականին, իսկ Դիլիջանի <<Մանուշակ>> կինոթատրոնի գույքի պայմանագրային պարտավորությունները՝ 2011 թվականի հունվարին: Պայմանագրային պարտավորությունների կատարման ավարտից հետո վարչությունն ընկերությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվությանը չի տիրապետում:

2. Յուրաքանչյուր տարվա կտրվածքով պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տարեկան ծախսերի նախահաշիվները և աշխատակիցների հաստիքացուցակները հաստատելու վերաբերյալ հայտնում եմ, որ՝

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայության ընկերություններում, օրենքով սահմանված կարգով, իրականացվում է հաստիքացուցակների և ամենամյա ծախսերի նախահաշիվների հաստատում, բացառությամբ այն ընկերությունների, որոնք գործունեություն են իրականացնում պայմանագրային հիմունքներով և համապատասխան պայմանագրերը դեռևս կնքված չեն:

3. Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման գործընթացն իրականացնելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ին ընդունվել է <<Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգելու մասին>> ՀՀ կառավարության N 490-Ն որոշումը, որով սահմանվել է՝

- վարչության ենթակայության թվով 32 ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման ժամանակացույցը՝ 2012 և 2013 թվականների համար՝ ըստ եռամսյակների և կոնկրետ ընկերությունների,
- մասնավորեցվող ընկերությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակայնության ապահովումը,
- մասնավորեցմանը մասնակցելու ցանկություն հայտնած իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ բանակցությունների արդյունքում լավագույն տարբերակի ընտրության հնարավորությունը:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության թվով 41 ընկերությունների մասնավորեցման (օտարման) գործընթացը կազմակերպելու վերաբերյալ հայտնում եմ, որ այդ գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի <<Պետական գույքի մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերությունների մասնավորեցման նախապատրաստման աշխատանքները կանոնակարգելու մասին>> N 490-Ն որոշմանը համապատասխան:

5. Պետական մասնակցությամբ ընկերությունների արդյունավետ կառավարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ հայտնում եմ, մասնավորապես, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից իրականացվող՝ ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների դիտասևեռման (մոնիտորինգի) արդյունքները վկայում են, որ տարեց տարի նվազում է վնասով աշխատող ընկերությունների թիվը:

Ինչ վերաբերում է հաշվետվության մեջ ներառված՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում իրականացված ընտրանքային ստուգումների արդյունքներին, ապա ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության մասով հայտնում եմ, որ՝

ա) <<Երառսպասարկում>> ՓԲԸ-ի կողմից ձեռք բերված գույքի շահագործման ժամկետ սահմանված է մինչև մեկ տարի, որը համաձայն հաշվապահական հաշվառման ստանդարտների համարվում է փոքրարժեք գույք:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ քաղ.Երևան, Արշակունյաց պողոտայի 28/5 հասցեում գտնվող 85 քմ մակերեսով վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքի վարձավճարի հաշվարկման բազան ընդունվել է ՀՀ կառավարության 22.02.2001թ. N 125 որոշմամբ հաստատված վարձավճարների հաշվարկման կարգը: Տարածքը վարձակալությամբ տրամադրվել է ավելի բարձր արժեքով:

Ինչ վերաբերում է վարձակալությամբ տրամադրված՝ քաղ. Երևան, Մինաս Ավետիսյան 4-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող խանութի վարձավճարի գումարին, ապա <<Երառսպասարկում>> ՓԲԸ-ի պետությանը սեփականության իրավունքով պատկանող

բաժնետոմսերը Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն են հանձնվել 2009 թվականին, մինչդեռ նշված տարածքը 25 տարի ժամկետով վարձակալությամբ է հանձնվել դեռևս 2001 թվականին:

բ) <<Երևանի ջրամատակարարման ուղեմաս>> ԲԲԸ-ի 2011թ. նախահաշվի հաստատումը հետաձգվել է, քանի որ <Երևանի ջրամատակարարման ուղեմաս>> ԲԲԸ և <<Հարավկովկասյան Երկաթուղի>> ՓԲԸ-ի միջև փոխհամաձայնության արդյունքում պայմանագիրը կնքվել է 2011 թվականի հուլիս ամսին, որով հիմնավորել են <<Երևանի ջրամատակարարման ուղեմաս>> ԲԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների և աշխատանքների գները: Նախահաշիվը հաստատվել է վերահսկիչ պալատի կողմից իրականացված ուսումնասիրությունից հետո:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ, (ուժի մեջ է մտել 2011թ.-ի ապրիլի 1-ին) կատարվել է ՀՀ կառավարության 2001թ դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման փոփոխություն, որով վերանայվել է մինչև 3.0 մլն. դրամ զուտ շահույթից շահութաբաժին չվճարելու դրույթը:

Ընկերությունում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողությունից հետո, 25.10.2011թ. թիվ 46 վճարման հանձնարարագրով, ՀՀ պետական բյուջե է վճարվել 1 129 000 դրամ շահաբաժին:

2011 թվականին <<Երևանի ջրամատակարարման ուղեմաս>> ԲԲԸ-ում վերանայվել է ընկերության աշխատողների հաստիքացուցակը, կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Հարգանքով

Ա.Սահակյան

Մեթոդաբանության և օրենսդրության մշակման բաժին
Է.Մաթևոսյան, 52 73 90

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

«____»_____ 20 թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (37410) 521 877, ֆաքս՝ (37410) 529 753

№ _____

ՀՀ վարչապետ
պարոն՝ Տիգրան Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի կատարումն Ձեր 2013 թվականի փետրվարի 8-ի N 02/23.16/1728-13 հանձնարարականի, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվության «Առաջարկություններ» բաժնում մատնանշված գործերից՝

թիվ 390՝ Հրազդան կինոցանցի «Ծաղկաձոր» կինոթատրոն(ՀՀ կառավարության 14.10.2004թ. թիվ 1491-Ն);

թիվ 284՝ Նորաշեն թաղամասի «Հանրախանութ» ԱՇՕ (ՀՀ կառավարության 08.08.2003. թիվ 995-Ա);

թիվ 324՝ «Դվին» հյուրանոցային համալիր ՓԲԸ (ՀՀ կառավարության 11.03.2004թ. թիվ 319-Ա) գործերով կնքված մասնավորեցման պայմանագրերում պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով տույժ կամ տուգանք վճարելու պարտավորություն չի սահմանվել, ուստի Վարչությունը վերջիններիս կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմքով տույժ կամ տուգանք բռնագանձելու պահանջներով դատարան դիմել չէր կարող:

Ինչ վերաբերում է «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲ ընկերության պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով տույժ բռնագանձելու հարցին, տեղեկացնում ենք, որ ընկերության կողմից Վարչություն է մուտքագրվել դիմում, որով վերջինս ժամանակ է խնդրել՝ ներկայացնելու լրացուցիչ ապացույցներ ներդրումային պարտավորությունները կատարված լինելու փաստի վերաբերյալ, որը բավարարվել է:

Ընկերության կողմից նշված ժամանակահատվածում համապատասխան փաստաթղթեր չներկայացնելու դեպքում, Վարչությունը հայցով կդիմի դատարան՝ պահանջելով նաև պայմանագրով նախատեսված տույժերը:

Հայտնում ենք նաև, որ «Պետական կրկես» ՊՈԱԿ-ի վերաբերյալ գործով ներկայացվել է շենքի ոչ սեյսմակայուն լինելու վերաբերյալ փորձագետի եզրակացություն, որն էլ հիմք է հանդիսացել շենքն ամբողջությամբ քանդելու և

հետագայում կառուցապատելու համար: Տվյալ դեպքում ոչ վաճառողը, և առավել ևս գնորդը չեն տիրապետել շենքի ոչ սեյսմակայուն լինելու փաստին:

Ավելին, գնորդի կողմից նախորդ տարում կատարված ներդրումը չի ծառայել իր նպատակին, քանի որ շենքը քանդվել է:

Վերը նշվածի հիմքով, Վարչության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 760-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է «Պետական կրկես» ՊՈԱԿ-ին ամրացված գույքն օտարելու մասին որոշման մեջ փոփոխություններ կատարել հստակեցնելով նոր շենքի կառուցման համար ներկայացվող պահանջները (միջազգային ստանդարտներին համապատասխանող կրկեսի շենք ունենալու վերաբերյալ) և պրոֆիլի պահպանման հետ կապված ժամկետները:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Մանուշակ» կինոթատրոնի գործով որևէ ժամկետանց պարտավորություններ չեն եղել:

Ինչ վերաբերում է ընկերության գործունեության վերաբերյալ Վարչության կողմից տեղեկատվությանը չտիրապետելու փաստին, ապա նշված պայմանագրային կետի չկատարման հետ կապված որևէ տույժ կամ տուգանք նախատեսված չէ, սակայն Վարչությունը կաշկանդված չէ (առաջիկայում) հայցով դիմելու դատարան՝ պայմանագրի նշված կետի կատարումն պարտավորեցնելու պահանջով:

Հարգանքով՝ **Ա.Սահակյան**

Հայցապահանջների և իրավական ակտերի բաժին
կատարող՝ Ա.Ավանեսյան 52 63 89